Հավելված N 60
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սննդամթերքի անվտանգության վարչության (այսուհետ՝ Վարչություն) անասնաբուժության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր անասնաբույժ (ծածկագիրը՝ 23-32.2-Մ2-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր անասնաբույժն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր անասնաբույժի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր անասնաբույժը կամ Բաժնի ավագ անասնաբույժը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է անասնաբուժության ոլորտի պետական քաղաքականության մշակումը,
2. Իրականացնում է անասնաբուժության ոլորտում ռիսկերի կառավարումը և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,
3. Իրականացնում է հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ հավաքագրումը, մշակումը և ներկայացումը,
4. Իրականացնում է անասնաբուժության ոլորտի վերաբերյալ ստացված տվյալների ամփոփման, վերլուծության աշխատանքները,
5. Իրականացնում է հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրումը և մշակում անասնաբուժական տարբերակված միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր,
6. Իրականացնում է դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի, հիվանդությունների օջախների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և կազմում է օջախների վերացման համալիր միջոցառումների պլան,
7. Իրականացնում է ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին ըստ անհրաժեշտության պարզաբանումներ և խորհրդատվության տրամադրում,
8. Իրականացնում է պետական աջակցությամբ իրականացվող անասնահակահամաճարակային միջոցառումներին և համալիր միջոցառումների իրագործման անհրաժեշտ գույքի, պարագաների և պատվաստանյութերի չափաքանակների ճշգրտում և բաշխում,
9. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության, այլ նախարարությունների և մարմինների կողմից ներկայացված օրենքների, կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքների տրամադրում,

[illegible] կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված դիմումների, բողոքների, հարցումների, պարզաբանում կամ տեղեկատվություն ստանալու հետ կապված պատասխան գրությունների կազմման աշխատանքները,

11. Իրականացնում է մասնակցություն օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող անասնաբուժության ոլորտին վերաբերող հանդիպումներին, խորհրդակցություններին, սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին,

12. Իրականացնում է ԵԱՏՄ և այլ միջազգային կառույցների կողմից ներկայացված գրությունների ուսումնասիրություններ և դրանց հետ կապված գրությունների կազմման աշխատանքները:

Իրավունքները՝

• Ներկայացնել առաջարկություններ անասնաբուժության ոլորտի վերաբերյալ ստացված տվյալների ամփոփման, վերլուծության աշխատանքների վերաբերյալ,

• Մասնակցել անասնաբուժության ոլորտում ԵԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ, համագործակցությանը,

• Ուսումնասիրել և վերլուծել հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տվյալները,

• Ուսումնասիրել դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի վերլուծության արդյունքները և աաջարկություններ ներկայացնում հիվանդությունների օջախների վերացման համալիր միջոցառումների պլանի մշակման վերաբերյալ,

• Ուսումնասիրել անասնաբուժության ոլորտում ռիսկերի կառավարման և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,

• Պատրաստել Բաժնի իրավասության սահմաններում կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված դիմումների, բողոքների, հարցումների, պարզաբանում կամ տեղեկատվություն ստանալու հետ կապված պատասխան գրություններ:

Պարտականությունները՝

• Ներկայացնել հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն և անասնաբուժական տարբերակված միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ,

• ներկայացնել դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի, հիվանդությունների օջախների վերաբերյալ տեղեկատվություն և օջախների վերացման համալիր միջոցառումների առաջարկություններ,

• ներկայացնել առաջարկություններ անասնաբուժության ոլորտում ռիսկերի կառավարման և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,

• ճշգրտել և բաշխել պետական աջակցությամբ իրականացվող անասնահակահամաճարակային միջոցառումներին և համալիր միջոցառումների իրագործմանն անհրաժեշտ գույքի, պարագաների և պատվաստանյութերի չափաքանակները,

• Նախապատրաստել բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև մշակել դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր,

• Մասնակցել անասնաբուժության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի), մշակման ու քննարկման գործընթացներին՝ սահմանված կարգով,

• Մշակել բաժնի աշխատանքային ծրագիրը:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճան

1	**Ուղղություն**	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն
2	**Ոլորտ**	Անասնաբուժություն
3	**Ենթաոլորտ**	Անասնաբուժություն
4	**Մասնագիտություն**	Անասնաբուժություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կենսաբանական գիտությունների կամ առողջապահության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: